

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ՄՇԱԿ

„ՄՇԱԿ“ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՌԱՋԻՆԿԱՅ 1887 ԹԻՒՆ

Կը հրատարակվի Թիֆլիսում, նոյն դիրքով և նոյն պարագրաֆով: Մենք կը ոտանայնք սեփական
ՀԵՌԱՊԵՐՆԵՐ:
«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլի է, կէս տարվանը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Բարձրագույն և Բաղադրական փողոցների ան-
կիւնում, Թամարաշվիլի տանը):
Կայսերութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել հետևեալ հա-
ցեով. ТИФЛИСЪ, Редакція газеты «МШАКЪ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳԻՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԻԱԳՈՒԹԻՒՆ

Կը թիւ հաստատութիւններ իրանց նպատակին
չեն հանում.—ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Յորենի առե-
տուրը Անդրկովկասում. Հայոց թատրոն. Նամակ
Աղստաֆայից. Նամակ Խմբագրին. Ներքին լուրեր.
—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Պարսկաստա-
նից. Արտաքին լուրեր.—ԽԱՆԻ ԼՈՒՐԵՐ.—ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԿՐԹԻՉ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ԻՐԱՆԵՆ ԵՊԱՏԱ- ԿԻՆ ՁԵՆ ՀԱՍՆՈՒՄ

I.

Ոչ որ չէ կարող ուրանալ որ եկեղեցին
ազգային բարոյականացնող ազդեցութիւն
ունի մի ազգի վրա:

Ոչ որ չէ կարող հերքել զպրօցի կրթիչ
և բարոյականացնող ներգործութիւնը մի
հասարակութեան մասող սերունդի վրա:

Անուրանալի է, նոյնպէս, մամուլի
կրթիչ և դաստիարակիչ դերը մի ժողովր-
դի մէջ:

Ահա՛հրեքի է և թատրոնի բարոյակա-
նացնող ու կրթողական նշանակութիւնը մի
հասարակութեան համար:

Բայց արդե՞ք իր շինութեան պատերով
է միայն ազդում եկեղեցին բարոյականաց-
նող կերպով ժողովրդի վրա.—Թէ իր վար-
դապետութեան բովանդակութեամբ և իր
սպասաւորների իրանց բարձր կոչմանը հա-
մապատասխան լինելով: Արդե՞ք զպրօցը
իր լոկ շինութեամբ որ և է օգուտ կարող
է տալ, եթէ նրա ղեկավարները, վարժա-
պետները անպատասխան կը լինեն իրանց
պաշտօնի համար: Արդե՞ք մամուլը, եթէ
իրանց կոչմանը անպատասխան, տգէտ, կամ
անբարեխիղճ խմբագիրներին ձեռքով կը
ղեկավարվի, կարող է որ և է օգուտ տալ
ազգին: Արդե՞ք թատրոնը միմիայն իր
շինութեամբ, նոյն իսկ բեմի վրա խաղա-
ցած պիէսաների բովանդակութեամբ կրթիչ
հաստատութիւն կարող է համարվել, թէ
հասարակութիւնը կրթելու համար հար-
կաւոր են իրանց կոչմանն արժանի կա-
տարողներ, ղեկասաններ:

Բայց մեզանում այդ հարցերը ոչ որ եր-
բէք չէ առաջարկում:

Եկեղեցին մի վեհ հաստատութիւն է,
բայց նրա ներկայացուցիչների, հոգևորա-
կանների կենտրոնէնքը մեզանում բաղկա-
ցած է մեծ մասամբ ստոր դասակարգի
մարդկանցից, թերուս անձնաւորութիւննե-
րից, մարդկութեան կրօնական շարժման
պատմութեան հետ անձանթ, մարդուս
հոգեբանական նուրը զգացմունքները ըմ-
բռնել անկարող և ուրեմն մարդուս հոգու
վրա ազդել անընդունակ մարդկանցից: Ո՞չ
է ձեռնադրվում մեզանում քահանայ կամ
վարդապետ. մեծ մասամբ այն մարդը, որ
հասարակական ուրիշ որ և է պաշտօնի
համար անպատասխան է: Մենք հօան ենք,
իսկ նրանք մեր հովիտները, բայց կարող է
արդե՞ք հօան մտաւոր և բարոյական դար-
գացումից իր մտաւոր և բարոյական զար-

գացումով ստոր հովիտ բարոյականացնող
կերպով ազդել իր հօան վրա: Մանաւանդ
մեր գաւառական քաղաքներում՝ ձեր ծա-
ռան, ձեր խոհարարը, ձեր այգեպանը քա-
հանայ է ձեռնադրվում կամ քահանայ
է ձեռնադրվում ձեր ծառայի որդին, որ շատ
շատ մի ծխական դարձում մի ողորմելի
ուսում է ստացել: Եւ ահա իր մտաւոր
զարգացումով, իր բարոյականութեամբ ձե-
ղանից աւելի ստոր մարդը պէտք է ձեզ
ուսուցնորդի կիսնքի բարոյական շաղի
մէջ, նա պէտք է քարոզ ասի ձեզ, պէտք է
խորհուրդներ տալ ձեզ ձեր կեանքի ծանր
բայցներում: Կարող է արդե՞ք այդ տեսակ
անպարզացած մարդը ըմբռնել նուրը կեր-
պով ձեր հոգեկան դրութիւնը և հոգեբա-
նապէս ազդել ձեզ վրա, ջօշափել ձեր հօ-
գու ամենախոր, ամենաթափաք, ամենա-
նուրը լարերը... Կարող է արդե՞ք բարոյա-
կանացնել ձեզ, մտաւորապէս, հոգեպէս
բարձրացնել ձեզ այն մարդը, որ բարոյա-
պէս և մտաւորապէս ձեզանից ստոր է:

Նշան կարող ենք ասել և մեր դարձ-
ներին ուսուցիչների մասին: Մենք յանձնում
ենք մեր զաւակներին կրթութիւնը այնպիսի
մարդկանց, որոնց նրանց թերուս լինե-
լու, նրանց մտաւոր և բարոյական կրթ-
ութեան ստոր աստիճանի վրա կանգ-
նած լինելու պատճառով մեր տանն
էլ չենք ընդունում: Մի մարդ, որ
իր կեանքում ոչինչ չէ կարողացել, որ
ինքն էլ մի այնպիսի ընտանիքից
է դուրս եկել ուր դուք բացի վատ օրինակ-
ներից ուրիշ ոչինչ չէ տեսել, որին մենք
մեր տանը չենք էլ ընդունում, որին պա-
տիւ էլ չենք անում ձեռքը մեկնելու, որ
ուսուցիչ է դարձել ոչ թէ այն պատճառով
որ անյաղձելի կոչում էր գլուխ դէպի այդ
պաշտօնը, այլ մի կերպ ապրելու, մի կերպ
հացի կտորը վաստակելու համար, մի մարդ
որ մեծ մասամբ գլուխ էլ է իր ստոր վի-
ճակը թէ բարոյապէս և թէ մտաւորապէս
և չէ էլ համարձակվում մեր առջև նստե-
լու.—այդպիսի մարդուն մենք յանձնում
ենք մեր զաւակներին կրթութեան զործը:

Անցնենք այժմ մամուլին: Ո՞չքեր են լի-
նում, շատ քիչ բացառութեամբ, մեր անգա-
րացած հասարակութեան մէջ պարբերական
հրատարակութիւնների խմբագիրները, հը-
րապարակաւ խօսնէր: Մեծ մասամբ
մոլութիւն, անյայտ, թերուս անձնաւորութիւններ,
որոնք որ և է ինտելիգենտ հասարակու-
թեան մէջ չեն էլ ընդունվում: Կիսատ ու-
սում ստացած, անպարզ հասարակութեան
մակերևոյթից բարոյապէս և մտաւորապէս
ստոր անձնաւորութիւններ, այնպիսի մոլութիւն
ընտանիքներից դուրս եկած, որոնք ար-
համարհված են հասարակութիւնից, ի-
րանք ոչինչ հիմնաւոր ուսում չը ստա-
ցած, բարոյական կրթութեան ամենատար-
րական սկզբունքները սեփական ինքնակր-
թութեամբ չը սեփականացրած,—դրանք
պէտք է առաջնորդեն հասարակաց
կարծիքը: Եւ ահա նրանք իրանց լրա-

գրական գործունէութեան մէջ էլ շարու-
նակում են ընթանալ նոյն ուղղութեամբ,
որով ընթանում էին նրանց հայրերը:
Խմբագիրը պէտք է ապրելու համար շո-
ղորթի ժողովրդի ամենաստոր կրքե-
րին, պէտք է շողորթի մի քանի ռուբ-
լի նուիրող տգէտ աղային, պէտք է շո-
ղորթի այս կամ այն գաւառական քա-
ղաքում բարոյապէս արհամարհված, բայց
նոյն քաղաքում ոյժ ունեցող անձնաւոր-
ութեանը, որպէս զի շատ բաժանորդներ
ստանայ... Եւ այդ տեսակ մամուլ պէտք է
բարոյականացնող ներգործութիւն ունենայ
ժողովրդի վրա...

Ահա՛հրեքի է որ թատրոնը ահազին
բարոյականացնող ներգործութիւն ունի
հասարակութեան վրա: Բայց եթէ նա ու-
նի այդ բարոյականացնող ազդեցութիւնը,
այդ նշանով միայն, որ դերասանը, զեղա-
րուեստագէտը պատկերացնում է բեմի վը-
րա ամենաճիշդ, ամենանուրը կերպով
մարդկային հոգու բոլոր յուզմունքները,
շարժում է մեր հոգին, մտածել ու զգալ է
տալիս մեզ, ստիպում է մեզ կենտրոնաց-
նել մեր մէջ մեր բոլոր ամենանշանակա-
լի տածմունքներն ու զգացմունքները, առաջ
է բերում իր կենդանի և ճիշդ խաղով,
ինչպէս քահանան իր քարոզով, մեր սրտի
և ուղեղի մէջ բարոյական ինքնաբանու-
թիւնը: Բայց կարող է արդե՞ք այդ բոլո-
րն անել մի մարդ որ ինքն իր զարգաց-
մամբ բարոյապէս և մտաւորապէս ստոր է
այն հասարակութիւնից, որին նա յանձն
է առել կրթելու: Կարող է արդե՞ք մի
մարդ կամ մի աղջիկ ներկայացնել բեմի
վրա բարձր հասարակութեան շրջանը իր
բոլոր սովորութիւններով և ձևերով, երբ
այդ մարդը, կամ այդ աղջիկը երբեք ոչինչ
չեն կարողացել երբեք ոտք էլ չեն կոխել
իրանց ստոր դրութիւնից փոքր ի շատ
աւելի բարձր շրջանի հասարակութեան
մէջ, չը գիտեն մինչև անգամ իրանց պա-
հիլ չը գիտեն նստել ու վերկինար, չը
գիտեն վայելուչ կերպով խօսել, ձեռք մեկ-
նել, գլուխ տալ անգամ... Կամ կարող է
անկիրթ, ուսում չը ստացած, բարոյապէս
կրթութիւն չը ստացած, մարդկային միտ-
քի զարգացման, ոչ մի ազգի գրականու-
թեան հետ չը ծանօթ, ուրեմն և կեանքը
ու մարդուս սրտի հոգեկան արտայայտու-
թիւնները դիտել, ուսումնասիրել ան-
կարող անձն, լինի նա կին թէ մարդ,—
պատկերացնել մեր առջև մարդուս հո-
գեկան բոլոր արտայայտութիւններն ու
յուզմունքները իրանց կատարելա ճշդու-
թեամբ ու նրբութեամբ: Տգէտ և բարոյա-
պէս անկիրթ մարդը չէ կարող լաւ դե-
րասան լինել: Մտաւորապէս անզարգացած,
բարոյապէս անկիրթ կինը չէ կարող որ-
պէս դերասանութիւն իր խաղով հանգիստ-
կանի սրտի մէջ հոգեկան ցնցում առաջ
բերել, փոխել նրա ուղեղը, բարոյականաց-
նել նրան, բարոյական փոթորիկ առաջ բե-
րել հանգիստական սրտի մէջ, ստիպել նը-
րան ինքնաբանութեամբ վերաբերվել դէպի
իր սեփական եսը:

II.

Եկեղեցին եկեղեցի է ոչ թէ իր պա-
տերով, այլ իր սպասաւորներով:

Կարող է բարոյականացնող ներգործու-
թիւնը իր շինութեան մէջ չէ, այլ իր
վարժապետների մէջ է:

Մամուլի շնորհիւ՝ առաջնորդելու, ղե-
կավարելու, բարոյականացնելու հասարա-
կաց կարծիքը բովանդակվում է ոչ թէ
ուպարանի մուրով մրոտված սպիտակ
թերթի մէջ, այլ խմբագրի անձնաւորու-
թեան մէջ:

Վերջապէս ներկայացնող պիէսայի մէջ
չէ թատրոնի բարոյականացնող ներգոր-
ծութիւնը, այլ այդ ղեկավարն ոյժը բո-
վանդակվում է նոյն ինքն դերասանի և
դերասանուհու անձնաւորութեան մէջ:

Գ. Ա.

ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՈՐԵՆԻ ԱՌԵՏՈՒՐԸ ԱՆԴԻՊԿԱՍՏՈՒՄ

Ասացինք, թէ մեր երկրի զանազան գաւառի
գիւղացիների խական բաժինը զանազան համար,
հարկաւոր է դուրս գալ մեր ցոյց տուած ծախսե-
րը, որոնք, որպէս տեսանք, զանազան գաւառների
համար զանազան են այն գնից, որոնցով վա-
ճաւում են մեր ցորենի զանազան տեսակները
Եւրոպայի շուկաներում: Որովհետեւ իրօք, մեր ար-
տահանած ցորենը մի տեսակի ցորեն չէ, այլ վա-
նազան տեսակների է և նրանք բոլորն էլ իրարից
սարբերվում են իրանց գնիցով թէ մեզ մօտ և թէ
արտասահմանում:

Որոնք են մեր վաճառահանվող ցորենի տեսակ-
ները, ինչ անուններ են կրում նոքա արտասա-
նումում և ինչ անուններ են կրում նոքա մեզ
մօտ, ինչ յատկութիւններով են նրանք զանազան-
վում իրարից և մեր երկրի որտեղներն են նոքա
ծննդավայրերը:

Եթէ աչքի անցնելու լինէք մի ֆրանսիական
գիւղացակ, հազաւատիկների բաժնում դուք կը
կարգաւ այս խօսքերը, որոնք թարգմանաբէս նը-
շանակում են՝ պինդ ցորեն (blé dur) և փափուկ
ցորեն (blé tendre): Ամեն ցորեն կամ պինդ է
կամ փափուկ, բայց որպէս պինդը, նոյնպէս և
փափուկը ունի տեսակներ և բոլոր երկրների
պինդ հազաւատիկները նոյն արժանաւորութիւնը
չունեն, որպէս նաև փափուկ հատիկները:

1. Մեր երկրի արտահանվող ցորեններից պինդը
այն է, որ մեր հայ գիւղացիք անուանում են
զարդա և որը թուրքերը անուանում են զարդա-
բուլբուլ: Թուրքերն անուանում են զարդա-
ֆոթիլում և Բաթումում: Մեր զարդան պինդ ցո-
րենների այն տեսակիցն է, որը նաև Բուսաստա-
նում կրում է արհաւիրակ անունը: Վրացիների
մօտ նա կոչվում է թաթուխ, որը նրանք բա-
ժանում են չորս տեսակի՝ զուլթիլ-պիլա, թեթիլ-
պիլա, ծիթիլ-պիլա և շաւ-պիլա, այսինքն դեղին
բերեւաւոր, սպիտակ—կարմիր—և սև բերեւա-
ւոր: Հայերը և թուրքերը, որքան ինձ բայտնի է,
միայն երկու տեսակի են բաժանում զարդան.
հայերը ունեն դըմը-զարդա և սըլը-զարդա, այ-
սինքն դեղնազարդ և սևազարդ. թուրքերը մի
և նոյն տեսակներին անուանում են սարի-բուլբուլ
և զարա-գլըխ: Թուրքերն սարի նշանակում է
դեղին, զարա—սև, բուլբուլ—ցորեն, գլըխ—զար-
դա կամ ինչ վրացիք անուանում են պիլա, այ-
սինքն մաղեր, կամ դրանք՝ հասկի ծայրի փուշերն
են: Զարդա խօսքը գործածելը մենք աւելի յար-
մարաւոր ենք գտնում, քան թուրքերն սարի-
բուլբուլ խօսքը, որովհետեւ այս վերջինը արհաւու-
կայի կամ վրաց թաթուխի միայն մի տեսակն է
և զարա-գլըխը կամ սըլը-զարդան նոյն իրաւուն-
քով արհաւուկա է, ինչպէս որ սարի-բուլբուլն
կամ դըմը-զարդան:

Զարդան արտասահման է ուղարկվում մեր երկ-
րի Գանձակի և Բաղուրի նահանգներից, գոնէ զըւ-
խաւորապէս: Նա ստացվում է թէ ջրով և թէ
մանաւանդ անձրոյի հոգեկից և ամենամեծ յաջո-
ղութեամբ նա բուսնում է ոչ շատ բարձր սև
հողեայ լեռների և նրանց լանջերի վրա: Անձրոյի
տեղերից ստացած զարդա ցորենի պիլըր աւելի
մեծ առաձգականութիւն ունէ, նրա հացը աւելի
ուռուցիկ է, մի պուր ցորենի վրա աւելանում է
քաշը մինչ 22 ֆունտ կամ 550/օով (припеке),
մինչդեռ ջրովի հողերի մի պուր զարդայից ստա-
ցած հացը միմիայն մինչ 18 ֆունտ է աւելանում:
Վերջինս աւելի շուտ էլ է չորանում:

Բայց պինդ ցորենը, ուրեմն և մեր զարդան
արտասահմանում հաց թխելու համար չեն գնում:
Զարդայի հացը գոլված չէ: Թէ խաղաղութիւն և
թէ ճարտարապետ մեր զարդայի պիլըր չլնում
են մակարօն և կարկանդակների խմորիչները:
Իսկ մակարօնը աւելի թանկ է քան հացը և այդ
պատճառով զարդան ցորենների բոլոր այլ տե-
սակներից ամենաշատն է համարվում և ամե-
նից թանկ է գնահատվում:

Արդեօք մեր զարգան աւելի լաւ թէ աւելի վա-
տրն է, քան ուրիշ երկրներէ զարգան: Չեմ ու-
զում երաշխաւոր լինել ասածիս ճշդութեան հա-
մար, բայց հմուտ բանաւորներէ լսածս եմ կրկը-
նում, իբր թէ մեր զարգան Ռուսաստանի զարգա-
յից կամ արեւմտակայից լաւ է, բայց իտալական
զարգայից ստոր:

Մեր երկրից զարգան սկսեցին արտահանել մի-
միայն անցեալ տարւոյ օգոստոս ամսից սկսած.
դրանով է մեկնուում այս տարւոյ ցորենի առեւ-
տուրի մեծ շարժումը մանաւանդ Բազուի նահան-
գում:

Ամենայն զարգան գալիս է Ռւսիայից, Միսիսի-
պիայից, Ֆիւրադմիւրից և Հարի-Վարուից: Բայց եւրո-
պական արտահանողներէ ամենից շատ գովա-
սանք եւ լսեցի Ռւսիայի, ուրեմն Վոլոկայի գաւա-
ռի հայ բնակչին գիւղերի զարգայի մասին:

Ձարգայից դուրս, մեր արտահանող ցորենի
բոլոր միւս տեսակները վաճառել տեսակի են
պատկանում: Գործս են՝ զիւրգենին, կարմիր ցո-
րենը և սպիտակ ցորենը:

2. Գիւրգենի կոչված ցորենը գալիս է նոյն
գաւառներէ, որտեղից դուրս է բերվում նաեւ
զարգան. միայն թէ գիւրգենին, որքան եւ իմ ճա-
նապարհորդութիւններէ ժամանակ տեսած եմ, մի-
միայն տափարակ և ջրով խիստ առատ և խոնաւ
հողերումն է բուսնում: Մեր գիւրգենին եւ գեղ-
համարված չեմ, թէ միանգամայն մի այլ տեսակի
ցորեն լինի, քան զարգան. ինձ Արեւի և Նովոսի-
բադսկի տափարակների վրա բնակող թուր-
քերը և հայերը ասում էին, թէ երբ բնակական
հայերի զարգան իրանց մօտ ցանում են, մի կամ
երկու տարուց յետոյ կերպարանաւորուում է,
այլասեւում և ստացվում գիւրգենի: Գիւրգենու
հատիկները զարգայի հատիկների նման խոշոր
չեն և ոչ էլ սոցա վաղուտ և թափանցիկ դեղ-
նութիւնը ունեն: Աւելի դեղին է գիւրգենու մի
տեսակը, որը կոչվում է ալպիկ: Բայց լաւ գիւր-
գենուց նոսրացվում է աւելի լաւ հայ և նրա հացը
ստացվում է 1 կամ 20/100-ով աւելի քան զարգա
ցորենից:

Մեր գիւրգենին փոթիւում և բաթումում, որպէս
նաեւ արտահանումում կոչվում է գիւրկան, որով-
հետեւ մեր գիւրգենին նմանութիւն ունի Ռուսաս-
տանի գիւրկա կոչված ցորենի տեսակի հետ: Բայց
մեր գիւրգենին շատ ստոր է Ռուսաստանի գիւր-
կայից, հաւասար լինելով սրտ միայն ստոր տե-
սակներին:

3 և 4. Մեր արտահանող հացահատիկների մէջ
կան կարմիր և սպիտակ կոչված ցորեններ: Կար-
միր ցորենը գալիս է Ալեքսանդրապոլից, Ախալ-
քալաքից, Ալաշխաթից, Նոր-Բայազէդից, Կարսից:
Սպիտակ ցորենը գալիս է զլխաւորապէս Երևանի
գաւառից, բայց դուցէ և Ելիզաւէթից և Նոր-Բայա-
զէդից: Կարմիր ցորենը զլխաւորապէս զարնանա-
վար ցորեն է, մինչդեռ. զարգան, գիւրգենին և
սպիտակ ցորենը—աշնանացան են: Չը նայած դրան
փոթիւում և բաթումում թէ կարմիր և թէ սպի-
տակ ցորենը կոչվում են մէկը կարմիր աշնանա-
ցան (красная озимая), միւսը՝ սպիտակ աշնա-
նացան (белая озимая), ի հարկէ լոկ այն պատ-
ճառով, որ նման են Ռուսաստանի նոյնանուն ցո-
րեններին: Երևանի սպիտակ ցորենը կոչվում
է նաեւ սանդուղիկա:

Կարմիր բայց մանաւանդ սպիտակ ցորեններից
է, որ ստացվում է ամենագոված հացը. բայց
մեր այդ ցորենները շատ ստոր են Ռուսաստանի
օլիմպայ կոչված ցորենի լաւ տեսակից, հետեա-
պէս և մեր կարմիր ու սպիտակ ցորենները Ռու-
սաստանի կարմիր և սպիտակ լաւ օլիմպայի դէմը
չունեն Եւրոպայում: Հանրամասնը աւելի եւս ան-
նպատակ է դառնում մեզ համար նրանով, եւս, որ
մեր ցորենները ոչ մի տեսակի մարդու և առանց
խառնուրդի դուրս չէ բերվում ի վաճառ: Դա
մեծ պակասութիւն է, որի վրա ուշադրութիւն
ենք դարձնում բոլորին, թէ գիւղացիներին և թէ
վաճառականներին: Այդ կողմից Եւրոպայից շատ
պահանջող են և խառնուրդներ պատրաստող եւ
բազայիներ կարիքներ համար ոչ մեր գիւղացու
և ոչ էլ մեր վաճառականի խելքի բանն է: Հմուտ
անձեր ինձ հաւատացնում էին, թէ մեր ցորենի
անմարդկութեան և միտ խառնուրդների պատճա-
ռով, մեր ցորենի գինը Եւրոպայում մինչ քսան
կոպէկ աւելի պակաս են, քան թէ Ռուսաստանի
մօտաւորապէս նոյն տեսակների գինը: Որ մեր
ցորենները մեծ խառնուրդներ են ներկայացնում,
դրա պատճառները մի քանիս են. ի միջի այլոց
յիշենք, որ մեր վաճառականները գիւղացիներից
հաղարատը պղծեցին չեն առնում, այլ մէկից

20, միւսից 50, երրորդից 60 պոտ և այլն, բնա-
կան է որ այդպէս մաս մաս առնելով դժուար է
լինում ամեն մի տեսակ ցորենի վրա հսկել, որ
նրանք չը խառնվին իրար հետ: Բայց խառը
ցորեններ ստացվում են նոյն իսկ գիւղացիների
ձեռքից և մեծ չարիքը հէնց դա է:

Որպէս զանազան են ցորենի տեսակները, նոյն-
պէս և զանազան են նրանց գները Եւրոպայում,
ուրեմն և փոթիւում և բաթումում: Ամենից զլխա-
ւորը համարվում է զարգան, որի գինը Բաթում-
ում միւս այս տարի տասանութիւն է 1 ռուբլու և 1 ր.
17 կոպէկի մէջ: Միջին գինը կարելի է ընդունել
1 ր. 10 կոպէկ: Այդ այն գինն է, որով ծախ-
վում է մեր զարգան արտահանողներից սպարներ
փոթի կամ բաթում հասնելուն պէս, ուրեմն երբ
սպարները վրա բարելւել են մինչ կայարանը հաս-
նելու ծախքը, երկաթուղու ծախքը, քաղցրեղի
ծախքը և ցորենի կորուստը, կօմիսիօններին
վարձատրութիւնը և վաճառողի օգուտը, բն-
դամներ 43 կոպ. Հաշի-Վարուի զարգայի հա-
մար Գուրս եկեք 1 ր. 10-ից 43 կոպէկը և դուք
կիմանաք թէ Սալիանցի գիւղացին որքանով կա-
րող էր վաճառել իր ցորենը տեղի վաճառակա-
նին. 67 կոպէկով. այժմ երբ Բաթումում գինը
1 ր. 18 կոպէկ է, սալիանցին կարող է ծախել
74 կոպէկով, իսկ զարգաբային 80 կոպէկով նոյն
իսկ գիւղում: Պ.պ. թղթակիցներին եւ թղթում
ստուգել, թէ որքան համապատասխան են իմ եղ-
բակացուի թիւները իսկականի հետ:

Գների բարձրութեան կողմից երկրորդ տեղը
բռնում են կարմիր և սպիտակ ցորենները: Դոցա
գները եղած են Բաթումում 90 կոպ. մինչ 1 ր.
և որովհետեւ Ալեքսանդրապոլից և Երևանից ի նը-
կատի առնելու ծախքերը, վաճառականի 5 կոպ.
օգուտով միայն, 53 կոպէկ են կազմում, ուրեմն
այդ քաղաքներում ցորենի գինը կարող էր բարձ-
րանալ մինչ 47 կոպէկ. այժմ, երբ Բաթումում
այդ ցորենի գինը նմանապէս բարձրացել է, բը-
նական է, որ Ալեքսանդրապոլում, Երևանի, նրա
գինը կարող է հասնել մինչ 55 կոպէկ:

Որքան մեծ տարբերութիւն զարգա արդիւնա-
բերող գաւառների գիւղացիների և, օրինակ, Հի-
բալի գաւառի, Ալեքսանդրապոլի գիւղացիների
անտեսական պայմանների մէջ! Ահա թէ որտեղ
կարելի է հարցական նշան դնել ցորենի արտա-
հանման օգուտի նվազումը, որովհետեւ մեզ յայտ-
նի հետազոտութիւնները ցույց են տուել, որ ալեք-
սանդրապոլցուն նոյն իսկ իրան, ցորենի պուզը 50
կոպէկ է նստում: Ի հարկէ, դեռ. իմանալու է, թէ
արդեօք արտահանումը չի օգնի ալեքսանդրապոլ-
ցուն որ նա աւելի քիչ վնասվի, քան նա առաջ
վնասվում էր և որ մինչև անգամ մի փոքր էլ օ-
գուտ տեսնէր անտեղ, որտեղ առաջ միմիայն
յուրահանգիւ կարելի էր և աւելի ոչինչ:

Վերջին տեղը բռնում է մեր գիւրգենին կամ
մեր գիւրկան, որի գինը սովորապէս տատանվում
է 92 և 97 կոպէկների մէջ:

Վերջացնում ենք մեր ցորենի աւետուրի մա-
սին սոյն յօդուածների շարքը, վերապահելով մօ-
տիկ ապագայում քանի մի խորհրդածութիւններ
աւելացնել մեր աւետուրի այդ ճիւղի ապագայի
մասին: Հարցի ուսումնասիրութեան և նրան պար-
զելու և հրապարակ դուրս բերելու դրժում, կու-
ղէի որ ամեն ընթերցող իր սրտում այդ վկայէ,
մենք աշխատած ենք լինել դուռ ուսումնասիրող,
այն բոլոր անաչառութեամբ, որ մինչև վկայէ և
հետազոտողին: Չը նայած ներկայ յօդուածների
շարքի երկարութեան, մենք դեռ համառօտեցինք
մեր ասելքը, բայց այդ էլ բաւական է առայժմ:
Յոյս ունենք, որ ներկայ փորձը կը նպաստէ այդ
աւարկայի մասին լինելու թէ դիտողութիւնները
և թէ վիճարանութիւնները մեր տեղական հայ
թէ ուսու հրատարակութիւններում աւելի որոշ
բնաորութիւն և ուղղութիւն ընդունելու:

Դր. Ա. Արամյանեանց

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Հինգշաբթի օր հայոց դրամատիկական խումբը
ներկայացրեց Մօլիերի «Գոն-Դուան» կօմիդիան:
«Գոն-Դուան» ֆարսական առնված է մի հին
սպանիական լեգենդայից. խաղը լեզուաւոր վրա
չլինած հեղինակութիւններ կան Եւրոպական գրե-
թէ բոլոր գրականութիւնների մէջ: Դրանց բոլո-
րից պէտք է նախադասել Մօլիերի կօմիդիան: Մօ-
լիեր Գոն-Դուանին ներկայացրեց մի այնպիսի անձ-
նաւորութիւն, որպիսիներից բաղկացած էր իր
ժամանակի աշխատանքութեան մեծամասնութիւնը.
կենսքը նրանց համար խաղալիք էր դարձել, սուրբ

բան նրանց համար չը կար, ամեն բան նրանք
դրնում էին իրանց կրքերը յաղեցնելու համար:
Գոն-Դուան պտտելով քաղաքէ քաղաք ամեն տեղ
իր ճանին է գցում գեղեցիկ սեւին պատկանող
ներկայացուցիչներին, վանքերից փախցնում է մի-
անձնուհիներին, մտնում է աղետահանների պա-
լատները, չէ խորշում և գիւղական խրճիթներից:
Նրա գործունէութեան վերջ է դնում մի գերբնա-
կան այժ: Իր անթիւ սիրուհիներից մէկի ամուս-
նուն՝ Կօմանդօրին նա դաւաճանութեամբ ուղարկած
է լինում: Այնպիսով Կօմանդօրի գերեզմանի վրա
կատուցված արձանի մօտ, Գոն-Դուան ծիծաղե-
լով հրաւիրում է արձանին իր մօտ ընթերցել: Կօ-
մանդօրը գալիս է և իր կողմից հրաւիրում է իր
մօտ Գոն-Դուանին: Երբ Գոն-Դուանը գնում է գե-
տինը բացվում է և նրան կլանում է: Մօլիեր չէր
կամեցել փոխել լեգենդայի այդ գերբնական մասը
կայացնում է իրանով մի ամբողջ դասակարգ, որ
այդ ժամանակներում հասարակութեան մէջ իշխող
գիւղ էր բռնում. հանդամանքները այդ դասակար-
գի ներկայացուցիչներին դրել էին ժամանակի օ-
րէնքներից բարձր: Եւ միթէ նրանք միշտ անպա-
տիւ պէտք է մնային. եթէ ոչ այն ժամանակ, գո-
նէ ապագայում, պատմութիւնը պէտք էր իր հա-
շիւները տեսնէր նրանց հետ...:

Գոն-Դուանի գերը կատարում էր պ. Կիւրեղեան:
Պ. Կիւրեղեանի խաղը բաւական անհարթ էր. նա
իր ուշադրութիւնը դարձրել էր միայն մի քանի
տեսարանների վրա՝ օրինակ գեղջիկուհի հետ
տեսարանի, Գիմանի հետ ունեցած խօսակցու-
թեան տատարանի վրա և այլն և այլն, և այդ
տեսարանները բաւական լաւ խաղաց, մինչդեռ
ուրիշ մի քանի տեսարաններ՝ օրինակ, լիւթիւրայի
հետ, Գոն-Կարօսի հետ, և միւսները անդայն ան-
ցան: Մերայից Գոն-Դուանի ծառայ լէպօրելիս
դերում և Տեր-Գաթիեան Պիեթրի միջնակեալ դե-
րում և Տեր-Գաթիեան Պիեթրի միջնակեալ դե-
րում տիպիկական էին: Առաջինը լաւ էր մանու-
սանդ չորրորդ զործողութեան մէջ ընթերցել ժա-
մանակի ժողովուրդը գրեթէ չը կար:

Nemo

ՆԱԽԱ ԱՂԱՍՏԱՅԱՅԻՑ

Դայիմբերի 29-ին

Որ և է մի երկրի նիւթական յառաջադիւմ-
ութիւնը, նրա անտեսական մասի արագ զարգացու-
մի կողմից է զլխաւորապէս նրա սեպական ար-
դիւնաբերութիւնների կամուսնուր և յաջող արտա-
հանութիւնից: Ամեն մի փոքր ի շատ զարգա-
ցած երկրի, ամեն մի քաղաքակրթված կառավա-
րութիւն ոչ մի ջանք չէ ինչպէս իր երկրի մէջ
ճանապարհների հարցը պարզութեան միջոցները
գիւրգենու, առանց որի ոչ մի արդիւնաբերու-
թիւն, ինչ երկրում էլ լինէր, զարգանալ և արդիւ-
նաւորել չէ կարող:

Ահա մի քանի տարի է, որ շոգեմեքենան անց-
նում է Բազու-Բաթումում ամբողջ տարածու-
թիւնը, և այդ գծի վրա եղող ամեն մի արդիւնա-
բերող իրաւունք ունէր սպասելու, որ երկաթու-
ղու շինվելով թէ իր արդիւնաբերութիւնների տե-
ղափոխութիւնը կը դիւրանար և թէ ճանապար-
հաճականները այդ մասին կը թիկնանային, կարժա-
նանային:

Արդարացից Ժողովրդի այդ յօդը Այդրիւմ-
կանան այդ երկաթուղին թէ ոչ, ահա հարցը, ո-
րին շատ արդիւն և շատ է իրաւամբ «ոչ» կա-
րող էին պատասխանել:

Երկրի, Երևանի և Արցախի նահանգները
յայտնի են արդէն իրանց հայի նշանաւոր արդիւ-
նաբերութեամբ, որի, մանաւանդ վերջին երկու
տարիների արտահանութիւնը հասնում է բաւա-
կան նշանաւոր թիւերի. չը հաշւենք դեռ լաւ
բակը, որ գալիս է Երևանից և ուրիշ մեր երկրի
բաղամթիւ և բաղամտեսակ արդիւնաբերութիւն-
ները:

Բայց հայեցել թէ ինչ զօռնարութիւնների ենք
հանդիպում մենք այդ սպարանքները Արցախի
կայարանից, ուր նրանք ստացվում են, նոյն իսկ
մինչև Թիֆլիս, 88 վերստի վրա տեղափոխել:

1) Երկաթուղին տեղ չունենալով կայարանում
ստացված սպարանքները անմիջապէս դարձնում,
Խրաքանչիւր անգամ ստացված մի նշանաւոր
պարտիա տարվում էր պահել մինչև անգամ (և
այդ էլ քիչ չէ պատահում) երկու երեք օրով,
մինչև դատարաններ հասնար տեղ կը բացվի և ձեռ
սպարանքը ընդունել կը բարեհաճեն: Չեմ հաշ-
ւում դեռ ևս այն չափից դուրս անախտութիւն-
ները, որ ամեն անգամ ստիպված էր ունենալ

սպարանքներ և ֆուրգոններին հետ, նրանց
անտեղի կերպով մի քանի օր պահելով: Եւ նոյն
իսկ այդ հանգամանքը առիթ է տալիս շատ ան-
գամ քրեական դատի կերպով բարձրանալուն:

2) Չունենալով հարկաւոր քանակութիւն սպ-
արանքի վաղձների, ստացված սպարանքները
մնում են կայարանում ամենաքիչը 10, 15 օր,
մինչև ընդունելու կարգը կը գտր և կը բարձեին
տեղ հասցնելու:

3) Տեղի պտկաւորութեան պատճառով սպարանք-
ները թափվում են շատ անգամ (և ինչ շատ ան-
գամ, համարեա թէ միշտ) անխնամ, պղտաֆօրմից
դուրս բաց տարածութեան մէջ: Այսպիսով է անձ-
րեւ, պահանջում էր որ դուռն սպարանքների վրա
«բրեզինտ» ծածկէին, այդ իրանց պարտականու-
թիւնն է. բայց պատասխանը լինում է, եթէ
փոքր ինչ պատուաւոր մէկն էր, «չը կայ, ինչ ա-
նենք». իսկ եթէ լեզու չիմացող մի թուրք, կամ
մի որ և է գիւղացի էր՝ «ԵՆ ՎՈՐՄԻՆ»: Բայց ա-
րացել ինդիկան, ինչ մեղաւոր է սպարանքատէրը,
որ նրա սպարանքները ոչնչանում, փչանում են
անձրևի, ցիւրի տակ:

4) Երկաթուղու վարչութիւնը գրեթէ դատա-
պարտելի խնայողութեամբ պահում է կայարան-
ներում, մանաւանդ այնպիսի կայարաններում,
որպէս են Արտաշատ, Եւլախ, Հաշի-Վարու և
այլն, շատ փոքր թիւ ծառայողների, սկսած կան-
ցեկարիական պաշտօնականներից մինչև մշակները,
որոնց օրեկան աշխատանքի մասին միայն նա
կարող է գտգտարու ունենալ, որ իր աչքերով
տեսնում է այդ. եւ տեսնելով անգամ չեմ ու-
զում հաւատալ աչքերին, որ մարդը առաւօտեան
5 ժամից սկսած մինչև գիշերուպ ժամը 11-ը կա-
րող է անդադուր դործել և չը յոգնել. ոչ կիրակի
և ոչ տոն ունենալով, բայց այդպէս լինելով հան-
դերձ նրանց թիւը այն աստիճան սակաւ է, որ
կարճ ժամանակում և որպէս հարկն է բաւակա-
նութիւն տալ սպարանքատէրներին չեն կարող,
որքան էլ ցանկանային: Եւ այդ բանում այդ
մարդիկ չափ անգամ մեղաւոր չեն: Սա-
կան ինչ են տալում. որ և է 25, 30 ռուբլի:

Նմանաբերութեամբ այդքան դործերով պարզ է
թէ ինչ տեսակ վարկուրութիւն պիտի ունենային
այդ մարդիկ սպարանքատէրների հետ, մանաւանդ
նրանց, որոնք լեզու չը գիտեն, որոնք չենապիտի
փոխանակ փափախ ունեն, և գիւղացու կոչա
հագուստի տակ մի փոքր և միամիտ սիրտ:

Եւ այդ անտեսելի անպարտաւորութիւնների կըր-
կնութիւնն են թէ միայն այստեղ, Արտաշատ-
յում, այլ նոյն իսկ նշանաւոր չափերով և ու-
րիշ կայարաններում, օրինակ Եւլախում, ուր
ամիսներով ցիւրի մէջ թափված սպարանքներ եւս
տեսել եմ. քիչ չեն պատահել ինձ տեսնել մար-
դիկ, որոնք կլխանցիւն ձեռքերին օրերով հա-
մարեա լաց են եղել: Աւելցնեք թէ մի քանի վաղձ
սպարանք ունենք, և ձեռ ձեռքով ցանկանում էք
Թիֆլիս ուղարկել. դրա համար ոչ մի հնար չու-
նենք, եթէ ոչ չարութիւններով հարկի սպասել այդ 88
վերստ տարածութեան համար: Եթեմարդին չէ՝
էլ ինչ հարկ կայ այդքան չարաբանք քաշելու.
էլ ինչ հարկ կայ Արտաշատում 10, 20 օր սպա-
սելու, սրա ու նրա քանակից ժամերով քաշ դա-
ւու, սրան և նրան աղաչելու. մինչդեռ հանդիս
ձեռ տանը նստած, կարող էք ձեռ սպարանքը
յանձնել նահապետական կարգով հնադարեան
գոմէշի արաքաններին, որոնք ձեռնաւոր այդ 88
վերստը տալն անգամ աւելի շատ կարող են
տեղ հասցնել, քան մեր բարեբաւոր երկաթուղին իր
վառաւոր չողմեքենայով: Եւ ինչու էք ծիծաղում,
երբ բաղանջը արաքաններին ուղարկ լծելով ի-
րանց սպարանքները Թիֆլիս են տեղափոխում:

Եւ այդ բոլորը անում է երկաթուղու այն վար-
չութիւնը, որի համար դեռ երէկ «ՀՈՅ. ՕՈՅ»
հրատարակեց, որ միայն մի ամսվայ մէջ 800,000
րուբլի եկամուտ է ունեցել, այն վարչութիւնը,
որ առաջիկայ տարվան ընդգիտում իր ձեռքով
2,000,000 ռուբլի դուռ արդիւն ունի նշանաւոր
սպարանքը ձախքները դուրս դալով, այն վարչու-
թիւնը, որ բայց այդ նշանաւոր գոմէշները, տա-
րեկան մի պատկառելի դուռար էլ կառավարու-
թիւնից օգնութիւն է ստանում, այն, այդ վար-
չութիւնը:

Եւ ինչեցի միայն ամենայնաւոր պատահող ա-
նախադէտութիւնների և անպարտաւորութիւնների նը-
շանաւոր կողմերը. եւս չեմ թուում դեռ այն հա-
ղար ու մի գէպերը, որոնք տեղի են ունենում
ճանապարհորդների հետ, եւս չեմ թուում այն, որ
ահա երկու չարաթ սպարանք-ճանապարհորդա-
կան դիւանքները ժամերով ուշանում են, առանց

Երբ իշխան Ալեքսանդր տեղ հասաւ, պատգամաւորները երկուսը նրան ողջունեցին: Նախաձեռնեց յետոյ, պատգամաւորները երկուսը մի վազմով ճանապարհ ընկան իշխան Ալեքսանդրի հետ և նրան ողջնեցին մինչև Ֆրանսիոյ քաղաք Երևան: Երբ իշխան Ալեքսանդր ընկաւ իշխանի լոճին:

— Իտալական պատերազմական միջոցներ կարգադրութեամբ Հռոմում հիմնուիմ են ուստաց լեզուի դաստիարակութեանը սպանելի համար:

— Գերմանական մի քանի պաշտօնական քաղաքներ յայտնում են, որ կառավարչական բարձր շրջաններում անհրաժեշտ են համարում զօրքի թիւը աւելցնելու խնդիրը, և սպասում են, որ բնականաբար կարճակի, եթէ պատերազմական օրինակները անաշուղ վախճան կունենայ:

— Ֆրանսիական յայտնի «Temps» լրագրի, խոսելով քաղաքական յարաբերութիւնների մասին, այն միտքն է յայտնում, որ Ֆրանսիայի միակ և անկեղծ դաշնակիցը—այդ Միացեալ-Նահանգներն են:

— Ֆրանսիական զօրքի առանձին բաժինների հրամանատարները այժմ խմբւած են Փարիզում, որտեղ պէտք է խորհուրդ կազմեն Բուլանտէի նախագահութեամբ: Հանրապետութեան նախագահ Գրէվի ղեկավարական ճաշ է տալու հրամանատարներին:

— Անգլիական պաշտօնական կառավարութիւնը արդէն սկսել է պաշտօնապէս ցոյց տալ իր խտրութիւնները իրանդիպայութ: Ազգային միութեան նշանաւոր անդամները կալանաւորվում և դատի են ենթարկւում:

ԽԱՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ նոյեմբեր ամսու ընթացքում Օղէսայից տարված է արտասահման և գլխաւորապէս Անգլիա, 20,000 գլուխ ոչխար, 4,400 գլուխ եղ, 650 ձի և 130 կով:

Անգլիական վիտորիա թագուհին, իր յիսնամայ յօգեկանի յիշատակի առիթով, հիմնում է մի նոր շքանշան, որը պէտք է տրվի գրողներին: Այդ նոր շքանշանը պէտք է կրէ «Վարդի շքանշան» անունը:

1820 թին Միացեալ-Նահանգներում հրատարակւում էր 500 լրագիր և ամսագիր: Այժմ այնտեղ հրատարակւում 14,160 լրագիր և ամսագիր: Այդ թիւերը արդէն իրանց ցոյց են տալիս թէ ինչ հսկայական քայլերով է առաջ գնում Միացեալ-Նահանգներում լրագրական գործը:

Անգլիայում քիչքիչ սովորութիւն է մանում հարսանիքի առիթով նոր տեսակ ընծաներ տալ: Հարսի և փեսայի ազգականները, փոխանակ սովորական ընծաներ ուղարկելու, ինչպէս են ունեայ և

արծաթեայ զարդարանքներ և այլն, հարսի մօր համաձայնութեամբ վարձում են մի ընտանիքի քաղաքում: Երբ իշխան Ալեքսանդր ընկաւ իշխանի լոճին, նախաձեռնեց յետոյ, պատգամաւորները երկուսը մի վազմով ճանապարհ ընկան իշխան Ալեքսանդրի հետ և նրան ողջնեցին մինչև Ֆրանսիոյ քաղաք Երևան: Երբ իշխան Ալեքսանդր ընկաւ իշխանի լոճին:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍՏՈՒՄՆԵՐ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍՕՖԻԱ, 17 դեկտեմբերի: Խնամակալութեան հակառակորդների մէջ նորից հարց է բարձրացել կառավարչական կուսակցութեան հետ հաշտելու մասին: Սակայն «Անկախ Բողոքի» լրագիրը այդ հաշտութեան դէմ հակառակ կարծիքներ է յայտնում:

ԲԷԼԳՐԱՒ, 17 դեկտեմբերի: Սերբ-բոլղարական յանձնաժողովը ստորագրեց մի արձանագրութիւն, որով Բրեզովո սահմանագրութիւնը, որը դարձել էր վիճաբանութեան նիւթ սերբերի և բոլղարների մէջ, մնայ Սերբիային: Արձանագրութիւնը ուղարկվեցաւ սերբական և բոլղարական կառավարութիւններին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 18 դեկտեմբերի: Վիեննայի ղեկավարական գործակալ զինեալ կառավարի նշանակված է թիւնապահ զօրքի մէջ, Պետերբուրգի ղեկավարական շրջանի հրամանատարի կարգադրութեան ներքոյ:

ԼՕՆԴՈՆ, 18 դեկտեմբերի: Միջխորհրդի խորհուրդը վճռեց յետագիւ մինչև փետրվար տարի պարլամենտի նստաշրջանի բացումը: Բողոքական պատգամաւորութիւնը ընդունվեցաւ արտաքին գործերի միջխորհրդի, լայց ոչ պաշտօնապէս:

Կ. ՊՈԼԻՒ, 18 դեկտեմբերի: Գաղթան-էֆենդին կանչված է այստեղ:

ԼՕՆԴՈՆ, 18 դեկտեմբերի: Հարախոստման մերժեց միջխորհրդական մէջ մտնել: Արտաքին գործերի միջխորհրդը ընդունեց բողոքական պատգամաւորներին վերին աստիճանի սիրավի կերպով արտապայտեց Անգլիայի համակրութիւնը դէպի Բողոքական, և հրաւիրեց նոյա իր խմբի մեջ, որտեղ հրաւիրված է նոյնպէս Սֆիայի բրիտանական նախկին գործակալ Լէստը:

ԲՈՒԽԱՐԵՍ, 18 դեկտեմբերի: Բուխարական պատգամաւորների ժողովը ընդունեց ուսուրումնական առևտրական դաշնագրեր:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՏԻՒՆ ՈՎՍԱՆԵԱ ՎԱՀՐԱՄԵԱՆ ԵՒ ՊԱՐՈՆ ԱԼԷԳՍԱՆԴՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԾԱՏՈՒԹԵԱՆՑՆԵՐԸ և իրանց որդիքը ԳՐԻԳՈՐ, ԲԱԳՐԱՏ և ՏԻԳՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ԾԱՏՈՒԹԵԱՆՑՆԵՐԸ, խնդրում են իրանց ազգականներին և ծանօթներին ներկայ լինել առաջին երկուսի դուստր և վերջինների քոյր ՍԱՇԻՆԿԱ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ տարեկից հոգեհանգստին, որը տեղի է ունենալու վաճառի մայր եկեղեցում, դեկտեմբերի 21-ին կիրակի օր, ժամը 11-ին:

ՄԱՂԲԻՐԻ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԵՐԱԶԱՐԻ ՀԱՆԴԵՍ
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ԳԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ
(Հինգերորդ տարի)

Առաջինից 1887 թւից «ՄԱՂԲԻՐԻ» կը հրատարակվի նոյն ուղղութեամբ, անհամեմատ չքեղ, քան նախորդ տարիները:
«ՄԱՂԲԻՐԻ» տարեկան բաժանորդագիրը 3 ռուբլի է, անբաժան են դրանից և պրէմիաները, որոնց գինն է 2 ռուբլի, ուրեմն «ՄԱՂԲԻՐԻ» ստանալ կամեցողները պէտք է ուղարկեն թէ «ՄԱՂԲԻՐԻ» տարեկան բաժանորդագիրը և թէ պրէմիաների վճարը, ընդամենը 5 ռուբլի:
Հասցէն՝ Тифлисъ, Редакция „Агбуръ“ իսկ արտասահմանից Tiflis, Rédaction du journal „Agbur“.

Խմբագիր-հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԵՂԲԱՐՑ ԾՈՎԵԱՆՈՎՆԵՐԻ ԵՒ ԸՆԿ.

ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
(Սօսնի փողոց, քարվանսարայ Անանովի)

ՎԱՀԱՌՈՒՄ Է Խաղաղատունակներ I և II փոխառութեան և ԱՊԱՀՈՎԱՑՆՈՒՄ Է 50 կոպ. հատը: 10 տոմսակից աւելին 45-կոպ. ՀԱՏԸ: 20 տոմսակից աւելին 40 կոպ. ՀԱՏԸ:
5—7 (հ. շ.)

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

(N. PAQUET ET COM.)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Չորեքշաբթի, դեկտեմբերի 24-ին, ԱՐՄԵՆԻԱ (ARMÉNIE) շոգենաւը, նաւապետ ՇԵՕԼՏ (SCHEULT) զուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսոն, Կ. Պոլիս և Մարսէյ: Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում պ. Գարանիօնին և Թիֆլիսում պ. Բէնօին, նախկին Արծրունի գալիերէում, № 103.

3—3

COMPAGNIE DES MESSAGERIES MARITIMES PAQUEBOTS-POSTE FRANÇAIS.

ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (ՄԵՍԱԺԸՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ:

Հինգշաբթի, 25 դեկտեմբերի, ԲԱԹՈՒՄԻ-Յ զուրս կը գնայ շոգենաւ SINDH (ՍԻՆԴ) նաւապետ LAFONT (ԼԱՖՈՆ) դէպի Կ. Պոլիս և Զմիւռնիա և յարակցելով Եաֆա, Պորտ-Սայդ և Ալեքսանդրիա գնացող ընկերութեան շոգենաւերի հետ:
Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ԲԱԹՈՒՄ և ԲԱԹՈՒՄԻ պ. պ. ԲՈՒՐԿԻՆԻ և ԸՆԿ. Խալ ԹԻՖԼԻՍՈՒ ՊԵՐԴՐ. ՀԵՅՈՐԵԱՆ ՀԵՅՈՐԵԱՆՑԻ:

4—4

DAS ECHO

IN BERLIN

Ist die beste und billigste Wochenschrift für Deutsche im Auslande. DAS ECHO bringt allwöchentlich in unterhaltender Form Berichte über alle politischen, wirtschaftlichen, wissenschaftlichen und gesellschaftlichen Vorgänge, welche sich in Deutschland und im Auslande abgespielen. DAS ECHO ist kein Parteiblatt, sondern es lässt die interessantesten Stimmen aller Parteien zu Worte kommen. DAS ECHO bringt in jeder Nummer eine oder zwei abgeschlossene Novellen, Erzählungen etc. aus der Feder bewährter Schriftsteller.

DAS ECHO will somit seinen Landsleuten im Auslande ein «Bote aus der Heimat» sein, deshalb ist auch sein Abonnementspreis ein sehr niedriger.

Die Expedition in Berlin S. W. versendet DAS ECHO nach allen zum Weltpostverein gehörigen Ländern für 4 Mark 30 Pf. vierteljährlich. In Russland kostet DAS ECHO durch die Post oder die Buchhandlungen bezogen jährlich 6 Rubel. Mit Versendung ins Innere oder mit Post versendung von Berlin aus 8 Rubel jährlich.

2—3

5—100

ВЫСОЧАЙШЕ Утвержденное Кавказское Товарищество торговли аптекарскими товарами въ Тифлисе (Графская ул., противъ Музея).
ԲԱՐԱԶԳԱՌԵՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԳԵՂԱՍՏՆ ԱՊՐԱՆԲԵՆԻ ՎԱՀԱՌՄԱՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ (Գրաֆսկայա փողոց, Մուզէի դիմաց):

ՏՕՆԱԾԱՌԻ ՀԱՄԱՐ

Մեծ ընտրութիւն կարգուցիլ չինած դեղատեսիլ իրերի, բազմաթիւ մատուի և զարդարանքների վառող թիւեր, մագնի, պարաֆինային մոմեր, բազմատեսակ մոմակալներ, զանազանազոյն լապտերներ:

ԲԵՆԴԱԼԵԱՆ ԿՐԱԿՆԵՐ, ՄԱՆԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՀՐԱՍԴԱՐՈՒԹԻՒՆ.

Օ-ը-կոյն, և հոտաւտ օժանդակը գեղեցիկ սրուակներում Մեծ քանակութեամբ զանազան կոսմետիկական և վարսաւորական ապրանքներ, ուստաց և արտասահմանեան գործարաններից:

«ՎԱՐԺԱՐԱՆ»

մանկավարժական ամսագիր I և II տարվայ բոլոր համարները վաճառվում են պ. Գ. Շահաբադաբադի մօտ: Երկու տարվայ համարները միասին 5 ռուբլի: Օտարաքաղաքացիք դիմում են այս հասցեով—Тифлисъ, Григорію Шахбудагану. Аббасъ-Абатская площадь, соб. домъ, № 8.

2—3

ԿՕՓԻ ՄՕԿԿՕ

Ս. ՍԻՈՒ և ԸՆԿ.
(Ը. 4907) 40—50 (2)

ՀԵՌԱԳԻՐ

Պատիւ ունեւ յայտնելու ԹԻՖԼԻՍԻ յարգելի հասարակութեանը, որ ՄԱԴԱԹԵԱՆ կղզու վրա կառուցված նոր շինութեան մէջ, շուտով բացվելու է ՄԵՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԵՆԴՐԱՆՈՑ, որ բաղկացած է աշխարհիս ամեն երկրներից բերված ամենաբարձր և ամենազեղեցիկ տեսական բազմաթիւ կենդանիներից և զագաններից, որոնց թիւում կան՝ դիշաւից, մասկեր, խոտակեր, կրծող, սողուն կենդանիներ, նոյնպէս կապիկներ, կրօիողիւններ, օձեր և զանազան տեսակների թռչուններ: Բացի դրանից, կենդանաւոր մէջ լինելու է ԿԱՊԿԵՆԻՐԻ, ՇԵՆԵՐԻ, ՊՕՆԵՆԵՐԻ (փղերի ձիւրի) և ԱՅՏԵՐԻ թռչուն: Կենդանաւոր մէջ զանաւոր է և ՎԱՐԺՎԱԾ ՓԻՂԻ:

Ներկայացման օրվայ մասին կը յայտնվի առանձին յայտարարութիւններով: Թիֆլիսի հասարակութեանը իմ յարգանքներս մատուցանելով մնամ

Կառավարիչ Կենդանաւորի Ֆ. Ի. Ֆից
3—10

ՏՕՆԱԾԱՌԵՐԻ ՀԱՄԱՐ

Վ. ԳԵՐԻՎՆԱԿԻ ԳԵՂԱՆԻԹԵՐԻ ՄԱԴԱԶԻՆԸ ստացել է մեծ քանակութիւն ընծաների (զարդարանքների և առհասարակ այն բոլոր պարագաների) որոնք անհրաժեշտ են շքեղ և արժան տօնածառեր սարքելու համար: Օտարաքաղաքացիների համար կայ պարագաների սարք թէ փոքր և թէ մեծ տօնածառերի համար, 5 ռուբլից մինչև 150 ռուբլի արժողութեամբ, որպիսիները անյապաղ կարող են ուղարկվել ցանկացողներին: Վառող թիւեր, անային բնագաւառ կրակներ և մանկական հրախաղութիւններ շատ արժան գնեցով:

3—5

ՄԻ ՈՒՍՈՒՑԻԶ

ՈՐ ԵՕԹ ՏԱՐԻ ՎԱՐԵԼ Է ՏԵՍԶԻ ԵՒ ՈՒՍՈՒՑԻԶ ՊԱՇՏՈՆ Հայոց թիմական և ծխական դպրոցներում, ցանկանում է ՈՒՍՈՒՑԻԶՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՈՆ ՈՒՆԵՆԱԼ ղեկավար Հայոց դպրոցներում ՉԱՓԱՌՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԵԱՄԻ: Հասցէն խմբակ «Մշակ» խմբագրատանը:

3—5